

ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Վրեժ Հարությունյան
ՍՍՀ
Արցախ

Անոտացիա: 1864թ. բժիշկ Դավիթ Ռոստոմյանի և Սովու Զոհրապյանի ջանքերով Բաքվում հիմնվում է բարեգործական մի ընկերություն, որը կոչվում է Բաքվի հայոց մարդասիրական ընկերություն: Ընկերության հիմնադիր անդամների մեծ մասը ծննդով շուշեցիներ էին, այդ իսկ պատճառով այն իր գործունեությունը ծավալում է նաև Շուշիում: Մարդասիրական ընկերությունը միջոցներ է հատկացնում Շուշիի դպրոցների, եկեղեցիների բարեկամմանը, բացում լվացքատուն, մտոր-մանկապարտեզ, կարուձնի ու փայտամշակման հիմնարկներ և այլն:

Բանալի բառեր՝ Բաքվի հայոց մարդասիրական ընկերություն, Դավիթ Ռոստոմյան, Սովու Զոհրապյան, բարեգործություն, կրթություն, մշակույթ, Շուշի:

Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը հիմնվել է բժիշկ, հասարարական գործիչ Դավիթ Ռոստոմյանի նախաձեռնությամբ լուսավորական, մշակութային և բարեսիրական գործունեություն ծավալելու նպատակով: Ռոստոմյանը ծնվել է 1820թ. Թիֆլիս քաղաքում: Նրա մանկության, պատանեկան և ուսանողական տարիների վերաբերյալ գրեթե տեղեկություններ չեն պահպանվել, հայտնի է միայն, որ նա իր կրթությունը ստացել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում:

1842թ. Դավիթ Ռոստոմյանը ավարտում է համալսարանը և բժշկի որակավորմամբ վերադառնում Նուխու գավառ, ապա մեկ տարի անց՝ հաստատվում Բաքվում [1]: Այստեղ ցուցաբերելով՝ մասնագիտական բարձր գիտելիքներ, ակտիվ գործունեություն է ծավալում Սալեանի ձկնարաններում, Լենքորանում, ապա Շամախու գավառում բռնկված համաձարակների՝ հատկապես խոլերայի դեմ կազմակերպելով սանհտարական խմբեր: 1849թ. Դավիթ Ռոստոմյանը նշանակվում է Շամախու նահանգային բժշկի օգնական, հետո ստանձնում Բաքվի նահանգային բժշկի պաշտոնը:

Գավառական բժշկի պաշտոնում Դավիթ Ռոստոմյանին հնարավորություն է ընձեռնվում շրջելու գավառներով, ավելի մոտիկից ծանոթանալու հայերի կյանքին, տեսնելու նրանց թշվառ վիճակն ու հասկանալու առօրյա խնդիրները: Այդ ժամանակ էր, որ նա որոշում է օգտակար լինել իր ազգին, զբաղվել մարդասիրական բուժն գործունեությամբ, լուսավորել խավար ու տգետ ժողովրդին և բարեգործությամբ սատար կանգնել անապահով ու կարիքավոր մարդկանց: Նման ծրագիրը կյանքի կոչելու համար Ռոստոմյանին անհրաժեշտ էին համախոհներ և ամենակարևորը՝ նյութական օգնություն: 1859 թվականից Ռոստոմյանը ձեռնամուխ է լինում անհնարին թվացող այս գաղափարի իրականացման կազմակերպչական աշխատանքներին՝ պարբերաբար լինելով Թիֆլիսում, Պետերբուրգում, բազմից խնդրանքով դիմելով հայազգի մեծահարուստներին. «Փողն ձեզանից, բայց աշխատելն, կանոնադրութիւն գրելն ու հաստատել տալն ինձանից» [2]:

1862-1863թթ. Դավիթ Ռոստոմյանը և նրա գաղափարակից Մովսես Զոհրապյանը որոշում են հիմնել բարեգործական կազմակերպություն «Բաքվի հայոց մարդասիրական ընկերություն» անվամբ: Նրանք կազմում են ընկերության կանոնադրությունը, և մինչ այն կիմբագրվեր ու կհաստատվեր, նրանց են միանում մի խումբ բաքվաբնակ հայեր: Թեև, կանոնադրության 10-րդ հոդվածի համաձայն, հիմնադիր անդամները համարվում էին ութը, այնուամենայնիվ, մինչ կանոնադրության հաստատումը, որը տևում է մեկ ու կես տարի, նրանք համալրվում են ևս հինգ անդամով. «Հիմնադիր անդամները համարվում են ութ: Պատուատը, անփոփոխ, և տարեկան անդամների թիւը սահմանափակուած չէ: Այս անդամների կարգը կարող են մտանել այն ամենայն անձիք հայերից որք գտանվում են Ռուսիոյ հպատակութեան տակ, առանց զանազանելու նոցա կոչումը, վիճակը և դաւանութիւնը» [3]: Դավիթ Ռոստոմյանը և մյուս տասներեք հիմնադիր անդամները հանձն են առնում ստորագրելու 12650 ռուբլի նորակազմ ընկերության հիմնական անձեռնմխելի դրամագլուխը [4]:

Դավիթ Ռոստոմյանի և Մովսես Զոհրապյանի ջանքերով բարեգործական կազմակերպություն ստեղծելու վերաբերյալ Ռուսական կայսրությանը ներկայացրած կանոնադրությունը վերջնականապես հաստատվում է 1864թ. մայիսի 21-ին և անվանվում «Բարձի հայոց մարդասիրական ընկերություն հանուն Ս. Գրիգոր Լուսավորչի»: Նորաստեղծ ընկերությունը ղեկավարում էն նրա հիմնադիր և նախագահ Դավիթ Ռոստոմյանն ու 13 հիմնադիր անդամները: Բացի հիմնադիրներից՝ այն ուներ 27 մշտական և տարեկան 15 անդամներ, սակայն, ըստ կանոնադրության, ընկերության անդամները պարտավոր էին ընդհանուր ժողով գումարել և երեք տարի ժամկետով ընտրել խորհրդի անդամներ: Ինչպես նաև գումարվելու էին տարեկան ընդհանուր ժողովներ, որտեղ պիտի քննարկվեին ընկերության հաշիվները և նախահաշիվները, կայացվեին պաշտոնատար անձանց ընտրությունները [5]:

Հարկ է նշել, որ ընկերության հիմնադիր անդամների մեծ մասը ծնունդով շուշեցիներ են՝ Դավիթ Ռոստոմյան (Թիֆլիս), Ներսես Նիկիտայի Կրասիլնիկյան (Շուշի), Ալեքսեյ Արտեմի Տեր-Ղուկասյան (Շուշի), Մովսես Զոհրաբի Զոհրապյան (Շուշի), Մովսել Դանիելի Շահզեղանյան (Շուշի), Գրիգոր Հայրապետի Թումայանց (Շուշի), Սարգիս Վիրիլի Այվազյան (Բաքու), Սարգիս Հովհաննեսի Տեր-Գրիգորյան (Շուշի), Գևորգ Պողոսի Լալայան (Շամախի), Հակոբ Սահակի Ասպետյան (Շուշի), Դավիթ Հովհաննեսի Աղամյան (Շուշի), Օհանջան Գրիգորի Հախումյան (Շուշի), Սարգիս Հարությունի Գրիգորյան (Շուշի) [6]:

Ընկերության բացման դեպքում Դավիթ Ռոստոմյանը խոստանում է ամեն տարի «Մեղու Հայաստանի» թերթում ներկայացնել ընկերության աշխատանքները՝ նախահաշիվը, կատարած նվիրատվությունները, եկամուտը և ծախսը, նշել ընկերության ընտրված անդամների անունները: Նա, հավատարիմ մնալով իր խոստմանը, հուլիսի 3-ի «Մեղու Հայաստանի» 24-րդ համարում գրում է: «Մարդասիրական ընկերութիւնը բարձրագոյն հաստատեցաւ 1864 ամի մայիսի 21-ին, վասն որոյ մենք բարտք համարացինք ընկերութեան հաշիվը տալ իւրաքանչիւր տարի մայիսից մինչև մայիսը: Ընկերութիւնը իւր իսկական գործնեութիւնը սկսելով անցեալ ամի մայիսի մեկից, այն օրից մինչև այսօր բացի 13 հիմնադիր անդամներից, որոնք գրիլ էին մինչև ընկերութեան կանոնադրութեան հաստատելը, ճարել է անփոփոխ 21, և տարեկան անդամներ 19. Ընդամենը՝ 53 անդամներ» [7]:

Բարձի հայոց մարդասիրական ընկերության գործունեության պատմությունը բաժանվում է երկու շրջանի. առաջինը՝ ընկերության կանոնադրության հաստատման օրվանից մինչև 1869 թվականը (մինչև Դավիթ Ռոստոմյանի մահը), երկրորդը՝ 1870 թվականից մինչև 1920թ.: Առաջին շրջանը կարելի է համարել նախապատրաստական, իսկ երկրորդը՝ ընդարձակ և լայնածավալ գործունեության շրջան: Նյութական սուր միջոցների պատճառով մինչև 1870թ. ընկերությունը իր գործունեությունը ծավալում է հիմնականում Բարձրության իրականացնելով կրթամշակութային ծրագրեր, նյութական օգնություն հատկացնելով մտավորականությանը, ուսանողներին, աշակերտներին, որբերին, այրիներին և աղքատներին: Զուգահեռաբար ընկերությունը պահում էր թոշակառուներ միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում, նպաստներ հատկացնում ծիսական դպրոցներին: Այդ շրջանում ընկերությունը դեռևս իր սեփական ուսումնական հաստատությունն ունենալու իրավունք չուներ, ուստի կանոնադրության 35-րդ հոդվածի համաձայն՝ պարտավոր էր միայն գործող դպրոցներում անապահով ընտանիքների երեխանների ուսման վարձը վճարել: «Ընկերութիւնը հոգ տանելով հայ պատանեաց մեջ կրթութիւն տարածելու իւր իննամբի տակ ընդունում է այն ծնողների զաւակները, որք իւրեանց չքաւորութեան պատճառաւ կարող չեն տալ նոցա պատշաճաւոր դաստիարակութիւն: Օգնում է վարժատունների մէջ արդեն դաստիարակվող պատանիներին՝ դպրոցական գրքերով, որամական և այլ տեսակ նպաստներով: և նպաստում ստորին դաստիարակողական ուսումնական վարժարաններում ուսման ընթացքը աւարտող աղքատ կարգի աշակերտներին՝ մտանել վերին կարգի ուսումնարաններ՝ համաձայն նոցա ծնողների և իննամակալների ցանկութեանը»[8]: Ուստի ընկերությունը շատ չնշին գումար է տրամադրում հասարակության աղքատ խավերին, որպեսզի խնայված միջոցներով կառուցի սեփական դպրոցը: Բարձի մարդասիրական ընկերության հոգաբարձությունը Շամախու թերակալ առաջնորդ Անդրեաս արքեպիսկոպոսի առաջարկությամբ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում ուսումնական հաստատություն կառուցելու թույլտվության խնդրանքով դիմում է Գևորգ Ե կաթողիկոսին: Բարձր գնահատելով ընկերության ազգօգուտ դերն ու նշանակությունը՝ Վեհափառ Հայրապետը ոչ միայն թույլատրում է դպրոցի կառուցումը, այլև օրինության կոնդակով ողջունում և

խրախուսում է կազմակերպությանը՝ հայ ժողովրդին մատուցած բարձր ծառայության համար[9], ինչը բնականաբար ավելի է ոգեշնչում ազգի նվիրյալներին:

1871թ. Ս. Գրիգոր Լուսավորիչ էկեղեցու բակում ձեռնարկվում են եկեղեցական-ծխական դպրոցի շենքի շինարարական աշխատանքները: Ըստ պայմանի՝ կառուցված շինությունը համարվելու էր եկեղեցու սեփականությունը, որի մի մասն ընկերությունը պետք է վարձով տար, իսկ դրանից գոյացած հասույթը հատկացներ Բաքվի հայոց ծխական դպրոցին. «Եթե Տեր մի արացե երբ և իցէ Ընկերութիւնն ձախորդ հանգամանքներով հարկադրված լինի դադարեցնելոյ իւր գործնեութիւնը, նույն ժամանակ յիշեալ իւր շինուածներու արդինքը պիտի մնան անդարձ սեպականություն յիշեալ Բաքուայ նորաշեն եկեղեցւոյն: Ընկերութիւնը պարտատրվում է պահպանելու, բարեկարգելու և ծխական դպրոցին օգնելու, երբ Հոգևոր Իշխանութեան եկեղեցական եկամուտներից սահմանեալ շքաւականանայ և, որովհետև Ընկերութեան գործունեութեան ըստ մեծի մասին շրջանը այս պայմաններով պիտի կենդրոնանայ եկեղեցւոյ բակում, վասն որոյ Ընկերութիւնը իւր կողմանէ բարեպատշաճ և օգտաւետ է համարում խնդրել Հոգևոր իշխանությունից ընդունելոյ համար իւր տեսչութեան տակ տեղույս նորաբաց օրիորդաց Հոգևոր ուսումնարանը, ի հարկ է բոլոր ծախուց հաշիւը Ընկերութեան խորհրդի անդամոց պատասխանատուութեանը թողելով, հետևելով այն բոլոր կանոնադրութեան հրամանատուութեան, որ Հոգևոր իշխանութիւնը կրարեհածի տալու ընկերութեան անդամներին» [10]:

Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը, իր գլխավոր նպատակներից մեկը համարելով կրթության բնագավառում ծխական դպրոցների բարեկավման համար ներդրած միջոցները, մինչև 1875թ. օժանդակում էր մեկ օրիորդաց և մասամբ մեկ արական ուսումնարանի, ուներ երկու որդեգիր: 1875թ.-ից հետո, շնորհիվ համալրված դրամական միջոցների, ընկերությանը լայն հնարավորություն է ընձեռնվում իր ծրագրերն իրականացնելու Բաքվի շրջանակներից դուրս՝ նյութապես և դասագրքերով աջակցելով հայկական այն խուլ գուղերի դպրոցներին, ուր մայրենի լեզուն արդեն մոռացված էր [11]:

Ընկերության գործունեության երկրորդ շրջանը կարելի է համարել առավել արդյունավետ և բեղմնավոր: Աստիճանաբար ընդլայնելով գործունեության շրջանակները՝ 1870թ. սկզբին ընկերությունը բացում է իր մասնավոր «Արոր» տպարանը, որտեղ տպագրված գրքերն ու դասագրքերը անվճար կամ մատչելի գներով տրամադրվում էին հայկական դպրոցներին և ուսումնարաններին: Նույն 1870 թ. ընկերությունը հիմնում է գրադարան-թանգարան, ուր հավաքագրվում և պահվում են զանազան ձեռագրեր, հնատիպ գրքեր, ամսագրեր, որոնց մի մասը՝ ընտրությամբ մնում էր գրադարանում մշտական ընթերցանության և ուսումնասիրության համար, իսկ մյուս մասը՝ թանգարանում պահելու նպատակով: 1880 թ. գրադարանին կից բացվում է ընթերցարան, որի օգտին ընկերությունը պարբերաբար կազմակերպում էր հանգանակություններ: Թեև հանգանակության արդյունքում չնշն գումար էր հավաքվում, սակայն ընկերությունը կարողանում էր այդ միջոցներով ձեռք բերել գրքեր, պարբերական հրատարակություններ և միևնույն ժամանակ հոգալ ընթերցարահի սկզբնական ծախսերը [12]:

Հիմնադրման օրվանից Մարդասիրական ընկերության կարևոր առաքելություններից մեկը եղել է որդեգրությունը, այսինքն՝ տարբեր ուսումնական հաստատություններում տասնյակ երիտասարդների՝ իր ինսամատարության ներքո պահելը, այն հաստատուն հույսով, որ ուսումն ավարտելուց հետո նրանք պիտանի և օգտակար լինեն հայ հասարակությանը: Այս նպատակով ընկերությունը շարունակում է որդեգիրների ընդունելությունը մինչև 1881թ.:

Քանի որ ընկերության գլխավոր նպատակը հայ աղքատ ընտանիքներին, որբերին, այրիներին օգնելն էր, հիվանդներին անվճար բժշկական օգնություն ցուցաբերելը, ուստի 1881թ. ի հիշատակ հանգույցալ Ալեքսանդր առաջին կայսրի՝ ընկերության հոգաբարձության խորհուրդը որոշում է բացել առթատանց, որը դառնալու էր բազմաթիվ հայ անապահով ընտանիքների օրեւան: Բարեգործական ընկերության շանքերով բացվել և մինչև 1920 թվականը գործել են տարբեր բարեգործական հիմնարկներ աշխատանքի տուն, մսուր, որբանց, ճաշարան, լվացքատուն, կազմակերպվել են խոհարարական դասընթացներ, կառուցվել տներ, որտեղ անվճար կամ մատչելի վճարով բնակվել են աղքատ ընտանիքներ [13]:

1899թ. Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինի հրամանով փակվում են Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը և մի շարք այլ բարեգործական հիմնարկներ: Առաջարկվում է ընկերության գործունեությունը շարունակել միայն կանոնադրության փոփոխության դեպքում: Նույն

թվականին ներքին գործերի նախարար Գորեմիկինը հաստատում է ընկերության՝ ընդհանուր ժողովում ընդունած նոր կանոնադրությունը: Ընկերությունը ստանում է նոր անվանում՝ «Բարձի հայոց մարդասիրական ընկերություն»: Փոփոխված կանոնադրությամբ դուրս են մղվում տասնյակ տարիներ գործող կրթական և ուսումնական ծրագրերը, ընկերության գործունեությունը սահմանափակվում է միայն բարեգործությամբ, այն էլ միայն Բարձի նահանգում: Ի. Լ. Գորեմիկինի հրամանով ընկերության մշակութային և ուսումնական գործունեության իրավունքից զրկելու կապակցությամբ ընկերությունն իր գումարների մի մասը նվիրաբերում է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանին, Շուշիի հայոց հոգևոր դպրոցին և Բարձի քաղաքային ինքնավարությանը:

Ընկերության հիմնադիրների զգալի մասը հայտնի և ազդեցիկ շուշեցիներ էին, այդ պատճառով Շուշին չեր կարող դուրս մնալ նրանց տեսադաշտից: Ընկերությունը միջոցներ էր տրամադրում դպրոցներ բացելու համար, հովանավորում էր նաև դպրոցներում սովորող հայազգի շնորհալի զավակներին: Շուշիի ծխական դպրոցների, ուսումնական հաստատությունների հոգաբարձուները պարբերաբար գումարում էին ժողովներ, որտեղ քննարկում էին տվյալ ուսումնական հաստատության կրթական ոլորտի գործունեության և փոփոխությունների, տարբեր առաջարկների, ինչպես նաև տնտեսական, ֆինանսական և այլ հարցերի վերաբերյալ զանազան հարցեր: Այդ նիստերի արձանագրություններն ամենայն ճշտությամբ ուղարկվում էին Բարձի մարդասիրական ընկերություն, ուր դրանք ուսումնասիրելով, խորհրդի անդամները համապատասխան ցուցումներ էին տալիս ու որոշումներ կայացնում [14]:

Հաճախակի կազմակերպվող հանգանակությունների արդյունքից կամ ընկերության տարեկան համալրվող հաշվից Շուշիի դպրոցներին պարբերաբար դրամական փոխանցումներ էին կատարվում. «Ի Հոգաբարձութեանս լուան զգրութիւն Մարդասիրական ընկերութեունդ Բազու քաղաքի, մատուցանեք Հոգաբարձութիւնս զրենդ անվանեալ պետական թղթադրամս առաջին արժողութեամբ մի հարիւր րուրի, իսկ երկրորդն ինգ հարիւր րուրին, ընդ ամիսն վեց հարիւր րուրին կտակեալ ի հանգուցեալ Հայրապետ Հախումեանց, յօգուտ Հոգևոր դպրոցեն Շուշույ, և խնդրէ զգրամագլուխեն թողով անձեռնմխելի, իսկ զոտկոսեն նորին ի գործ դնիլ յօգուտ չքաւոր աշակերտաց նոյն դպրոցեն, և զստացմանէ նոյն դրամոցն ծանուցանել նոյն Մարդասիրական ընկերութեան վասն և ապահովութեան նորեն» [15]: Այսինքն, Բարձի մարդասիրական ընկերության գործունեության պտուղները կարելի էր նկատել ոչ միայն Շուշիի տարբեր ուսումնական հաստատություններում կատարված ձեռքբերումներով՝ դպրոցներին և կարիքավոր սաներին օգնություն հատկացնելուց, այլ նաև որբերին և չքավորներին օգնելով, նրանց տրամադրելով կացարաններ ու ապահովելով աշխատանքով, քանի որ 1900-ականներին Բարեգործական միությունում փոխվում էին օգնության ձևաչափերը:

1906թ. սկսած միության տարեկան ժողովներում ումանք առաջարկում էին թողնել բարեգործության այն եղանակը, որն ունի կարեկցանքի ձև և անցնել օգնության ավելի խելացի ու նպատակահարմար եղանակի, այն է՝ կատարել օգնության բաշխումը աշխատանքի միջոցով: Ընկերությունը ստեղծում է տարբեր աշխատատեղեր (լվացքատուն, մսուր-մանկապարտեզ, կարուձեի ու փայտամշակման հիմնարկներ և այլն), որտեղ կարիքավորներն իրենց աշխատանքով ու քրտինքով էին վաստակում սեփական ապրուստի միջոցը [16]:

1913թ. հոկտեմբերին ցարական իշխանությունները վերականգնում են ընկերության մշակութային և ուսումնական գործունության իրավունքը, ինչպես նաև ընկերության նախկին անվանումը՝ «Ս. Գրիգոր Լուսավորչի անվան Բարձի հայոց մարդասիրական ընկերություն»[17]: 1914թ. Մարդասիրական ընկերությունը մասնայուղ է բացում Շամախիում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1918թթ.) ընկերությունը հավաքագրում է կամավորներ, վիրավորների համար բացում ամբուլատորիաներ, հիվանդանոցներ, ֆելիչերական կետեր՝ որանք ապահովելով բժշկական անձնակազմով և գույքով: 1914թ. հոկտեմբերին ընկերությանը կից հիմնվում է հայ կանանց կոմիտե, 1915թ. գաղթականական կոմիտե: Գաղթականների համար բացվում են որբանոց, հիվանդանոց, տրամադրվում՝ անվագ կացարան, սնունդ և հագուստելեն: 1918թ. ընկերությունը կապ է հաստատում Բարձի կոմունայի ղեկավարների հետ, մասնակցում թուրքական բանակի դեմ քաղաքի պաշտպանությանը: 1920 թ. մայիսին Աղբեջանում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո ընկերությունը դադարում է գործել:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք նշել, որ, չնայած ֆինանսական դժվարություններին, «Բարձի հայոց մարդասիրական ընկերությունը», ավելի քան կեսդարյա բարեգործական գործունեության շնորհիվ, կարողացավ փրկել բազմաթիվ հայ անապահով ընտանիքների, որոշ չափով կարողացավ բարելավել դպրոցների նյութական ծանր վիճակը և մեծ դեր է ունենալ հայության ուսումնառության համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1.ՀԱՍ, ֆ. 27, գ. 1, գ.55, թ. 4:
- 2.ՀԱՍ, ֆ. 27, գ. 1, գ.32, թ.2:
- 3.ՀԱՍ, ֆ. 27, գ. 1, գ. 394, թ. 4:
- 4.ՀԱՍ, ֆ. 27, գ. 1, գ.394, թ. 5:
- 5.ՀԱՍ, ֆ. 27, գ. 1, գ. 55, թ. 7:
- 6.ՀԱՍ, ֆ. 27, գ. 1, գ. 394, թ. 8:
- 7.ՀԱՍ, ֆ. 27, գ. 1, գ. 1, թ. 3:
- 8.ՀԱՍ, ֆ. 27, գ. 1, գ. 394, թ. 10:
- 9.ՀԱՍ, ֆ. 27, գ. 1, գ. 5, թ 22 շրջ.:
- 10.ՀԱՍ, ֆ. 27, գ. 1, գ. 31, թ. 3 շրջ.:
- 11.ՀԱՍ, ֆ. 227, գ. 1, գ. 31, թ. 4:
- 12.ՀԱՍ, ֆ. 27, գ. 1, գ. 31, թ. 4 շրջ.:
- 13.ՀԱՍ, ֆ. 27, գ. 1, գ. 83 թ. 5:
- 14.ՀԱՍ, ֆ. 545, գ. 1, գ. 319:
- 15.ՀԱՍ, ֆ. 27, գ. 1, գ. 84, թ. 5:
- 16.ՀԱՍ, ֆ. 27, գ. 1, գ. 181, թ. 1:
- 17.ՀԱՍ, ֆ. 27, գ. 1, գ. 236, թ. 30:

РЕЗЮМЕ

**Деятельность армянской филантропической организации в Баку
Вреж Арутюнян**

Ключевые слова: Армянская филантропическая организация Баку, Давид Ростомян, Мовсес Зограбян, благотворительность, образование, культура, Шуши.

В 1864 году в Баку была основана филантропическая организация доктором Давидом Ростомяном и Мовсесом Зограбяном, названная Армянской благотворительной компанией в Баку. Большинство основателей компании родом из Шуши, поэтому она распространила свою деятельность и в Шуши.

Армянская благотворительная компания тратила деньги на школы, улучшала церкви, открывала прачечные, детские сады, швейные и деревообрабатывающие предприятия и т.д.

SUMMARY

**The Activity of Armenian Philanthropic Organization in Baku
Vrež Harutyunyan**

Keywords: Armenian Philanthropic Organization of Baku, David Rostomyan, Movses Zohrapyan, charity, education, culture, Shushi.

In 1864 a philanthropic organization was founded in Baku by Dr. David Rostomyan and Movses Zohrapyan which was named Armenian Humane Company of Baku. Most of the company founders came from Shushi that is why it spread its activity in Shushi, too.

Armenian Humane Company spent money on schools, improved churches, opened laundry, kindergartens, sewing and wood manufactures and so on.